[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
22	Հունիս	2018 թ.		Բ	4226318897
[4] Մատուցման ամսաթիվը					
22	Հունիս	2018 թ.			

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 6 7 8 1
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ N 2470103343210000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[16] Բանկային տվյալները	N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[18] Լրացուցիչ տվյալներ	
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Ամսաթիվ

[20] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N Ս/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 69103018 քր գործով դատահաշվապահական և դատատնտեսագիտական փորձաքննություն	հատ	1	260000		260000
Ընդամենը						260000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

22/06/2018 09:00:13

69103018

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

քրեական գործից մաս անջատելու մասին

« 23 » մայիսի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ՔԳՎ վարչության պետի տեղակալ Յու.Իվանյանս, քննարկելով վարույթիս թիվ 61200517 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կենտրոնական պահեստում, դեռևս 2014թ. դեկտեմբերի 12-ին ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կատարված գույքագրման արդյունքում արձանագրվել է 12.222.437 ՀՀ դրամ արժողության նյութական միջոցների պակասորդ:

Նույն պահեստում 2016 թվականի մարտի 30-ին իրականացված գույքագրման արդյունքում արձանագրվել է ևս 3.549.946 ՀՀ դրամ արժողության նյութական միջոցների պակասորդ:

Բացի այդ, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան «ՊՈԱԿ-ին պատկանող տպարանում 2016 թվականի դեկտեմբերի 28-ին ՊՈԱԿ-ի ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացված գույքագրման արդյունքում արձանագրվել է 17.876.383 դրամ արժողության նյութական միջոցների պակասորդ: 2.691. 699 ՀՀ դրամ արժողության պարենային և նյութական միջոցների պակասորդ է արձանագրվել նաև ՊՈԱԿ-ին պատկանող Ծաղկաձորի հանգստյան տանը 2016 թվականի դեկտեմբերի 25-ին իրականացված գույքագրմամբ:

Այսպիսով, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ում իրականացված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է ընդհանուրը՝ 36.340.692 ՀՀ դրամ արժողության պարենային և նյութական միջոցների պակասորդ:

Փաստի առթիվ 2017թ. փետրվարի 7-ին ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 61200517 քրեական գործը:

2017թ. փետրվարի 14-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել վարույթ:

2017թ. մարտի 24-ին «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կենտրոնական պահեստի նախկին պահեստապետ Համբերիկ Գալստյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրություն:

2018թ. ապրիլի 27-ին մեղադրյալ Համբերիկ Գալստյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա, 1983թ. հուլիսի 1-ից աշխատելով «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կենտրոնական պահեստի պահեստապետ և հանդիսանալով նյութական պատասխանատու անձ, միասնական դիտավորությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, քրեական գործով չպարզված

անձանց հետ նախնական համաձայնությամբ, 2012թ. դեկտեմբերի 3-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում յուրացրել է իրեն պատասխանատու պահպանման վստահված, առանձնապես խոշոր չափերով՝ 12.950.105 դրամ ընդհանուր արժողության գրենական և տնտեսական ապրանքներ, ինչն արտահայտվել է հետևյալում.

Իր աշխատած ժամանակաընթացքում, Համբերիկ Գալստյանը «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար ձեռք բերված տարբեր տեսակի գրենական և տնտեսական ապրանքները համապատասխան հաշիվ-ապրանքագրերի հիման վրա ստացել և մուտքագրել է կենտրոնական պահեստ, որտեղից տարբեր ստորաբաժանումների կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա դրանք ելքագրել է և հանձնել է ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցներին: 2012թ. դեկտեմբերի 3-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում Համբերիկ Գալստյանը հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կենտրոնական պահեստ ստացված և իր պատասխանատու պահպանմանը հանձնված համալսարանի գույքային ընդհանուր ֆոնդից առանց համապատասխան ձևակերպման, պարբերաբար ապօրինի դուրս է հանել և տնօրինելով՝ յուրացման եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերով՝ 12.950.105 դրամ ընդհանուր արժողության գրենական և տնտեսական ապրանքներ: Պակասորդն հայտնաբերվել է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կենտրոնական պահեստում 03.12.2012 թվականից մինչև 31.12.2016 թվականն ընկած ժամանակաշրջանում իրականացված գույքագրումների ընթացքում:

Կենտրոնական պահեստում գոյացած ապրանքանյութական արժեքների պակասորդը թաքցնելու նպատակով Համբերիկ Գալստյանը 2012թ. դեկտեմբեր ամսից մինչև 2014թ. մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում կենտրոնական պահեստից ապրանքանյութական արժեքների ստացման պահանջագրերում բաց թողնվող ապրանքների սյունակներում ձեռագիր եղանակով փոփոխել է ելքագրված գրենական և տնտեսական ապրանքների քանակը և տեսակը, որից հետո կեղծված պահանջագրերը ներկայացրել հաշվապահություն: Ձեռագիր ուղղումների արդյունքում արտացոլված կեղծ տեղեկությունները մուտքագրվել են «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահական հաշվառման ՀԾ ծրագիր, ինչի արդյունքում հափշտակված 12.950.105 դրամ ընդհանուր արժողության գրենական և տնտեսական ապրանքների մի մասի պակասորդը՝ 5.114.433 դրամ գումարի չափով, քողարկվել է:

Քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալ Համբերիկ Գալստյանի կողմից միասնական դիտավորությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, առանձնապես խոշոր չափերով 12.950.105 ՀՀ դրամի յուրացում կատարելու վերաբերյալ մասով նախաքննությունն ավարտելու և մեղադրական եզրակացություն կազմելու համար:

Նախաքննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու համար դեռևս անհրաժեշտ է պարզել «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի տպարանի և Ծաղկաձորի հանգստյան տան պակասորդի, պատճառված գույքային վնասի առկայությունը և չափը,

Համբերիկ Գալստյանի կողմից վերը նկարագրված հանցավոր արարքներին մասնակից այլ անձանց ինքնությունը և առնչություն ունենալու հանգամանքները, ստանալ նշանակված դատատնտեսագիտական և դատահաշվապահական փորձաքննությունների եզրակացությունները, որից հետո նոր հնարավոր կլինի վերը նշված դրվագներով լուծել քրեական գործի վերջնական ընթացքը:

Նկատի ունենալով, որ նախաքննությամբ ձեռք են բերվել բավարար ապացույցների համակցություն Համբերիկ Գալստյանի կողմից միասնական դիտավորությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, առանձնապես խոշոր չափերով 12.950.105 ՀՀ դրամի յուրացում կատարելու վերաբերյալ մասով մեղադրական եզրակացություն կազմելու համար, Համբերիկ Գալստյանի նկատմամբ քրեական գործի անջատումը անհրաժեշտ է գործի հանգամանքներից ելնելով և չի կարող անդրադառնալ քրեական գործի վարույթի լրիվության և օբյեկտիվության վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածով և 28-րդհոդվածի 2-րդմասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Մեղադրյալ Համբերիկ Գալստյանի կողմից միասնական դիտավորությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, առանձնապես խոշոր չափերով 12.950.105 ՀՀ դրամի յուրացում կատարելու վերաբերյալ քրեական գործի մասն անջատել և անջատված գործով նախաքննությունը շարունակել թիվ 61200517 համարով:

2. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի տպարանի, Ծաղկաձորի հանգստյան տան, Համբերիկ Գալստյանի կողմից հանցավոր արարքներին մասնակից այլ անձանց ինքնությունը և առնչություն ունենալու հանգամանքները պարզելու վերաբերյալ մասի նախաքննությունը շարունակել 69103018 համարով և քրեական գործն ընդունել վարույթ :

3. Թիվ 61200517 քրեական գործում ընդգրկել սույն որոշմանը կից ցուցակում թվարկված փաստաթղթերը:

4. Որոշման օրինակներն ուղարկել մեղադրյալ Հ.Գալստյանին և տուժողի ներկայացուցչին:

5. Որոշման օրինակն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն:

վարչության պետի տեղակալ՝ Յու.Իվանյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

02.06.2017թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության փոխգնդապետ Ա. Կարապետյանս, քննարկելով վարույթումս գտնվող թիվ 61200517 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ի կենտրոնական պահեստում, դեռևս 2014թ. դեկտեմբերի 12-ին ՊՈԱԿ ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կատարված գույքագրման արդյունքում արձանագրվել է 12.222.437 ՀՀ դրամ արժողության նյութական միջոցների պակասորդ, այդ թվում՝ 6.389.040 ՀՀ դրամ արժողության A4 ֆորմատիթուղթևայլն:

Նույն պահեստում 2016 թվականի մարտի 30-ին իրականացված գույքագրման արդյունքում արձանագրվել է ևս 3.549.946 ՀՀ դրամ արժողության նյութական միջոցների պակասորդ:

Բացի այդ, <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան >>ՊՈԱԿ-ին պատկանող տպարանում 2016 թվականի դեկտեմբերի 28-ին ՊՈԱԿ-ի ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացված գույքագրման արդյունքում արձանագրվել է 17.876.383 դրամ արժողության նյութական միջոցների պակասորդ: 2.691. 699 ՀՀ դրամ արժողության պարենային և նյութական միջոցների պակասորդ է արձանագրվել նաև ՊՈԱԿ-ին պատկանող Ծաղկաձորի հանգստյան տանը 2016 թվականի դեկտեմբերի 25-ին իրականացված գույքագրմամբ:

Այսպիսով, <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան >>ՊՈԱԿ-ում իրականացված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են ընդհանուրը՝ 36.340.692 ՀՀ դրամ արժողության պարենային և նյութական միջոցների պակասորդ:

Փաստի առթիվ 2017թ. փետրվարի 7-ին ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 61200517 քրեական գործն ու կատարվելէնախաքննություն:

2017թ. փետրվարի 14-ից թիվ 61200517 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ի տպարանի հաստիքների լուծարման կապակցությամբ 2015. Ապրիլի 3-ին ՊՈԱԿ ռեկտորի հրամանով ստեղծվել է տպարանի նյութական արժեքների ընդունման-հանձնման հանձնաժողով: Հանձնաժողովը կատարել է տպարանում գտնվող հիմնական միջոցների և նյութական արժեքների փաստացի հաշվառում, որից հետո այդ տվյալները գտնվել են հանձնաժողովի անդամ՝ ավագ հաշվապահ Նազիկ Սևնյանի մոտ, ով այդ փաստացի

գույքագրման արդյունքները պետք է մուտքագրեր հաշվապահության ՀԾ համակարգ և կազմեր գույքագրման ցուցակ ու ընդունման-հանձնման արձանագրություն, ապա դրանք ներկայացներ հանձնաժողովի անդամներին՝ ստորագրման: Սակայն վերջինս նշված աշխատանքներն ավարտին չի հասցրել, աշխատանքի չի ներկայացել, ինչի հետևանքով տպարանի նյութական արժեքների ընդունում-հանձնում չի կատարվել: 23.06.2015թ. <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ ռեկտորի կողմից աշխատակազմի ղեկավարի զեկուցագրի հիման վրա նրան խիստ նկատողություն է հայտարարվել՝ աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ ցուցաբերած անբարեխիղճ ու անպատասխանատու վերաբերմունքի համար, որը հանգեցրել է համալսարանի տպարանի ապրանքանյութական արժեքների գույքագրման և ընդունման-հանձնման աշխատանքների հաշվապահական փաստաթղթավորման ձախողմանը, ինչով խաթարվել են հաշվապահության բնականոն աշխատանքը: Դրանից հետո էլ Նազիկ Սևինյանն ազատվել է աշխատանքից: Տպարանի հաստիքների լուծարման կապակցությամբ 2015. ապրիլի 7-ին ՊՈԱԿ ռեկտորի հրամանով աշխատանքից ազատվել են տպարանի տնօրեն Կարեն Պետրոսյանը և տպարանի բոլոր աշխատակիցները, իսկ տպարանի մուտքի դուռը փակվել և կնիքվել է:

<<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան >>ՊՈԱԿ-ին պատկանող տպարանում 2016 թվականի դեկտեմբերի 28-ին ՊՈԱԿ-ի ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացված գույքագրման արդյունքում արձանագրվել է 17.876.383 դրամ արժողության նյութական միջոցների պակասորդ:

2017թ. ապրիլի 14-ին <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան >> ՊՈԱԿ հաշվապահության բաժնի թիվ 301 աշխատասենյակի Նազիկ Սևինյանի նախկին աշխատանքային INVADER ֆիրմայի համակարգչի զննությամբ D գրառումով տրամաբանական հատորում հայտնաբերվել է Nfile գրառումով պանակ, որում առկա են տպարանի գույքագրումների վերաբերյալ քրեական գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ, որոնք ձայնագրառվել են էլեկտրոնային սկավառակի վրա:

Քննությամբ պարզվել է նաև, որ ՀՀ ԿԳ նախարարի 2016թ. հոկտեմբերի 21-ի թիվ 840Ա հրամանով ստեղծված ներքին աուդիտի աշխատանքային խումբը <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ում իրականացրել է 2015թ. և 2016թ. առաջին կիսամյակի համակարգի գնահատման աուդիտ, որի իրականացման շրջանակներում ուսումնասիրվել է նաև համալսարանի ճաշարանի գործունեությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ճաշարանի սննդամթերքի մի մասը ձեռք է բերվել առանց գնումների, իսկ վաճառքի համար ձեռք բերված ապրանքները պատշաճ կերպով չեն մուտքագրվել պահեստ, չի վարվել պահեստի գրանցամատյան, ապրանքները սահմանված կարգով դուրս չեն գրվել պահանջագիր-բեռնագրերի միջոցով: Ճաշարանի տնօրենի կողմից հաշվապահությանն է տրամադրվել ամենամսյա հաշվետվություններ: Պարզվել է, որ ամենամսյա հաշվետվությունների և դրամարկղ մուտքագրված գումարների մեջ առկա են տարբերություններ: Օրինակ՝ 2015թ. փետրվար ամսվա հաշվետվությամբ ներկայացված է 685,5 հազար դրամ ապրանքի վաճառք, փաստացի դրամարկղ է

մուտքագրվել 702,4 հազար դրամ կանխիկ գումար: Մարտ ամսվա հաշվետվությամբ ներկայացված է 863,1 հազար դրամ ապրանքի վաճառք, փաստացի դրամարկղ է մուտքագրվել 958,2 հազար դրամ կանխիկ գումար: Բացի այդ, համալսարանի ճաշարանում իրականացված ապրանքների վաճառքից ստացված գումարները միշտ չէ, որ օրական կտրվածքով են մուտքագրվել համալսարանի ճաշարան: Չնայած նրան, որ ճաշարանի տնօրենի կողմից ճաշարանի գործունեությունն իրականացրած ամիսների տարբեր օրերին պարբերաբար դրամարկղ է մուտքագրվել ապրանքների վաճառքից ստացված հասույթը, սակայն մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ համալսարանի ճաշարան ապրանքներ ստացվել են յուրաքանչյուր ամսվա վերջին օրերի դրությամբ, հարկային հաշիվներում մատակարարման և դուրսգրման ամսաթվերը նույնն են: Փաստորեն մատակարարը սննդամթերքն առանց ուղեկցող փաստաթղթերի հանձնել է համալսարանի ճաշարան և օրեկան մուտքագրման ու ելքագրման աշխատանքներ չեն կատարվել: Ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ 2015թ. ճաշարանն աշխատել է վնասով, միայն մեկ տարվա ընթացքում 3 աշխատողների աշխատավարձերի, դրանց հավասարեցված վճարների և ճաշարանում ձեռք բերված ապրանքների ընդհանուր գումարի հանրագումարը գերազանցել է ճաշարանի տարեկան հասույթի գումարը: Տարվա ընթացքում վճարվել է 3381,1 հազար դրամ աշխատավարձ, ձեռք է բերվել 5,166,1 հազար դրամի ապրանք, իսկ տարեկան հասույթը կազմել է ընդամենը 7,897,6 հազար դրամ:

Պարզվել է նաև, որ 2015թ. <<Վան Բուլանժե>> ՍՊԸ հետ կնքվել է 1095,0 հազ. դրամ արժողությամբ սննդի գնման պայմանագիր, <<Վան Բուլանժե>> ՍՊԸ-ն պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում մատակարարել է ընդամենը 773,3 հազ. դրամի ապրանք, չմատակարարված ապրանքի գինը կազմել է 321,6 հազ. դրամ, համալսարանի կողմից չի իրականացվել պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժի գանձումը: ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ ճաշարանի համար 2015թ. ձեռք է բերվել 5.166.1 հազար դրամի սնունդ, գնումների գործընթացով ձեռք է բերվել 1.095.0 հազար դրամի սնունդ, այսինքն 4.071.0 հազար դրամի սնունդ ձեռք է բերվել առանց պահպանելու << գնումների մասին օրենսդրությունը:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով տպարանում հայտնաբերված պակասորդ ապրանքների առաջացման պատճառները, պատճառված վնասի չափը, խախտումներ թույլ տված անձանց, աուդիտի արդյուքում արձանագրված խախտումների նորմատիվ ակտերի պահանջներից բխելու, խախտումների հետևանքով վնաս պատճառելու, դրանում մեղավոր անձանց և մի շարք այլ հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով << քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-249-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Վարույթումս քննվող թիվ 61200517 քրեական գործով նշանա դատատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննություն, r կատարումը հանձնարարել <<Հույս և Օրենք>> ՍՊ ընկերությանը /փորձագետն Հենրիկ Նորիկի Միրզոյան, Նարեկ Հակոբի Գրիգորյան/:

2.Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

√ ա) <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտակ համալսարան>>ՊՈԱԿ տպարանում 01.12.2011-31.12.2016թթ. ընթացք ապրանքանյութական արժեքների գույքագրումներ, ապրանքանյութական արժեքնե ընդունում-հանձնումներ կատարվել են, թե ոչ, եթե այո, ապա դրանք իրականացվել արդյոք տվյալ ժամանակահատվածներում հաշվապահական հաշվառման ոլորտ գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան, թե ոչ:

√ բ) Տպարանում՝ հետազոտվող 01.12.2011-31.12.2016թթ. ժամանակաշրջանո կատարված գույքագրումներով ապրանքանյութական արժեքների պակասորդներ հայտ բերվել են, թե ոչ, եթե այո, ապա այն ինչպիսի հաշվապահական ձևակերպու ստացել:

գ) Տպարանը՝ հետազոտվող 01.12.2011-31.12.2016թթ. ժամանակաշրջանո ինչպիսի և ինչ քանակությամբ արտադրանք է տվել և դրանք սահմանված կարգ փաստաթղթավորվել և հաշվապահական ձևակերպումներ ստացել են, թե ոչ:

դ) Տպարանում՝ հետազոտվող 01.12.2011-31.12.2016թթ. ժամանակաշրջանո <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտակ համալսարան>> ՊՈԱԿ համապատասխան ստորաբաժանման կողմից իջեցվ պատվերների շրջանակներում թողարկման ենթակա ապրանքների արտադրությ համար անհրաժեշտ նյութերի /հումքի/ տեսակներին, քանակին, ծավալ համապատասխան են արդյոք ստացվել ապրանքանյութական արժեքները /նյութ հումք և այլն/, թե ոչ:

ե) Տպարանը՝ հետազոտվող 01.12.2011-31.12.2016թթ. ժամանակաշրջանո կենտրոնական պահեստից կոնկրետ ինչ տեսակի ապրանքանյութական արժեքներ ստացել և դրանք հետազոտվող ժամանակաշրջանում ըստ հաշվապահակ հաշվառման փաստաթղթերի ամբողջությամբ ծախսագրել է, թե ոչ:

√ զ) Տպարանում՝ հետազոտվող 01.12.2011-31.12.2016թթ. ժամանակաշրջանո կատարված գույքագրումներով ի հայտ բերված պակասորդներն ու ավելցուկնե բխում են արդյոք գույքագրումից գույքագրում ընկած ժամանակաշրջան վերաբերվող անալիտիկ և սինթետիկ հաշվապահական հաշվառմ փաստաթղթերում արտացոլված տվյալներից և դրանց հիման վրա տրվ հաշվապահական հաշվառման ոլորտում գործող նորմատիվ ակտերի պահանջների թե ոչ :

√ է) Տպարանում կատարված գույքագրումներով ի հայտ բերված և փորձաքննությա ճշտգրտված պակասորդներն ու ավելցուկները զուտ հաշվապահական հաշվառմ տեսանկյունից ինչի հետևանքով է առաջացել:

ը) <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ի տպարանում նյութական պատասխանատու անձ՝ Կարեն Պետրոսյանի նյութական պատասխանատվությանը հանձնված ապրանքանյութական արժեքների պակասորդների հետևանքով փորձաքննությամբ ճշգրտված տվյալներով <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ին որքան վնաս է պատճառվել և այդ պատճառված վնասի հարցում ՊՈԱԿ-ի որ աշխատակիցների կողմից զուտ հաշվապահական և տնտեսագիտական տեսանկյունից ինչ խախտումներ են թույլ տրվել, որոնք նպաստել կամ կարող էին նպաստել պատճառված վնասի առաջացմանը:

թ) ՀՀ ԿԳ նախարարի 2016թ. հոկտեմբերի 21-ի թիվ 840Ա հրամանով ստեղծված ներքին աուդիտի աշխատանքային խմբի կողմից <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ ճաշարանում հայտնաբերած և արձանագրած խախտումները բխում են արդյոք տվյալ ժամանակաշրջանում ճաշարանի գործունեությանը վերաբերվող հաշվապահական հաշվառման անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերում արտացոլված տվյալներից ու հիշյալ ժամանակաշրջանում գործող աուդիտի խմբի կողմից արձանագրված խախտումներին վերաբերվող նորմատիվ ակտերի պահանջներից, թե ոչ:

ժ) Ելնելով ՀՀ ԿԳ նախարարի 2016թ. հոկտեմբերի 21-ի թիվ 840Ա հրամանով ստեղծված ներքին աուդիտի աշխատանքային խմբի կողմից արձանագրված խախտումների, զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից արժանահավատությունը պարզելու նպատակով իրականացված հետազոտման արդյունքներից արդյոք վերջնական հաշվով ճաշարանի 2015-2016թթ. իրականացված գործունեության ընթացքում առկա են այնպիսի խախտումներ, որոնցով պետությանը կամ <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ին պատճառվել է վնաս և այդ պատճառված վնասի հարցում ՊՈԱԿ-ի որ աշխատակիցների կողմից զուտ հաշվապահական և տնտեսագիտական տեսանկյունից ինչ խախտումներ են թույլ տրվել, որոնք նպաստել կամ կարող էին նպաստել պատճառված վնասի առաջացմանը:

✓ ***3.*** *Փորձագետին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև չեն առաջադրվել սույն որոշմամբ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:*

4. Փորձագետին տրամադրել՝

-2011-2016թթ. ընթացքում տպարանում կատարված գույքագրումների արդյունքները:

- <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ում համակարգի գնահատման աուդիտի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը :

- Նազիկ Սևինյանի նախկին աշխատանքային INVADER ֆիրմայի համակարգչի զննությամբ D գրառումով տրամաբանական հատորում հայտնաբերված Nfile գրառումով պանակի տեղեկությունները՝ էլեկտրոնային սկավառակի վրա:
-Անհրաժեշտության դեպքում փորձագետին կտրամադրվեն նաև քրեական գործի նյութերը:

•Փորձաքննության կատարմանը մասնակից դարձնել նաև <<Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան>> ՊՈԱԿ գլխավոր հաշվապահին, նյութական պատասխանատու անձանց:

•5. Փորձագետին պարզաբանել << քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակընհայտ կեղծ եզրակացություն տալու համար << քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված փաստաթղթերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում << քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝ **Ա. Կարապետյան**